Փաստ. անվանումը	Պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների ձևավորման և բեռնվածության հաշվարկի կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ/ԿԳ-28-03
Հաստատման ամսաթիվը	01/03/2012
Վերջին վերանայումը	28/10/2022
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող /պաշտոն, անուն ազգանուն/	Աշխատանքային խումբ
Ներդրման/իրականացման պատասխանատու	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ղեկավար

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն
28/10/2022	Կարգը վերանայվել է հիմքում ունենալով միջազգային և տեղական լավագույն փորձը, մասնավորապես՝ հստակեցվել են պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման դրույթները, խմբագրվել՝ պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության հաշվարկի նորմերը	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան ՈԱ կենտրոնի ղեկավար
28/10/2022	«Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ»-ը վերանվանվել է որպես «Պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների ձևավորման և բեռնվածության հաշվարկի կարգ»	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան ՈԱ կենտրոնի ղեկավար
24/11/2015	Կարգը մասնակիորեն խմբագրվել և համապատասխանեցվել է ԵՄՀ փաստաթղթերի կառավարման ընթացակարգի պահանջներին	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան ՈԱ կենտրոնի ղեկավար

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան կամ ԵՄՀ) պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքների ձևավորման և բեռնվածության հաշվարկի կարգը (հետայսու՝ Կարգ) սահմանում է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հիմնական հաստիքների ձևավորման սկզբունքներն ու պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության հաշվարկի նորմերը:

2. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

2.1. Համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոններն են՝ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ և դասախոս:

2.2. Դասախոսի տարակարգին կարող են հավակնել համապատասխան մասնագիտության գծով առնվազն մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձիք (բացառությամբ «ֆիզդաստիարակություն» մասնագիտության գծով, որին կարող է հավակնել առնվազն բակալավրի որակավորում ունեցող անձը):

2.3. Ասիստենտի տարրակարգին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող անձիք:

2.4. Դոցենտի պաշտոնին կարող են հավակնել համապատասխան մասնագիտության գծով ինչպես արդեն պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձիք, այնպես էլ համապատասխան կանոնակարգով սահմանված դեպքերում գիտական աստիճան ունեցող և առնվազն 5 տարվա դասավանդման փորձ ունեցող անձիք:

2.5. Պրոֆեսորի պաշտոնին կարող են հավակնել ինչպես արդեն պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձիք, այնպես էլ համապատասխան կանոնակարգով սահմանված դեպքերում դոցենտի գիտական կոչում և առնվազն 8 տարվա դասավանդման փորձ ունեցող անձիք:

2.6. Ամբիոնի վարիչի պաշտոնին կարող են հավակնել ԵՄՀ ամբիոնի վարիչի ընտրության կարգով սահմնված պահանջներին համապատասխանող անձիք:

2.7. Պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնները համալրվում են մրցութային կարգով: Պրոֆեսորադասախոսական կազմի տարբեր տարակարգերի ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպական գործունեության առանձնահատկությունները, մրցութային և պաշտոնի տեղակալման առանձնահատկությունները սահմանվում են ԵՄՀ գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնակարգով և պաշտոնի նկարագրերով:

2.8. Ամբիոններում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի հաստիքացուցակը կազմվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Պրոֆեսորի և դոցենտի ամբողջական մեկ դրույքի ձևավորման համար սահմանվում է 600 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածություն ողջ ուսումնական տարվա համար, իսկ ասիստենտի կամ դասախոսի համար՝ 700 ժամ ընդհանուր ծանրաբեռնվածություն:

2.9. Որպես հիմնական կազմի անդամներ կարող են հրամանագրվել առնվազն քարրորդ դրույք ծանրաբեռնվածություն ունեցող անձիք: Պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները կարող են առավելագույնը ունենալ մինչև 1.5 դրույք ծանրաբեռնվածություն (բացառությամբ դրամաշնորհային, կրկնակի դիպլոմի և այլ հատուկ ծրագրերով նախատեսված ժամեր):

2.10. Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների փաստացի վարձատրությունը իրականացվում է մեկ ամբողջական դրույքի համար սահմանված դրույքաչափի և նրա փաստացի զբաղվածության արդյունքում հաշվարկված գործակցով (0.25 դրույք, 0.5 դրույք, 0.7 դրույք, 1.1 դրույք և այլն)։

2.11. Լսարանային ժամերը (դասախոսություններ, լաբորատոր և գործնական պարապմունքներ, սեմինարներ, կոնսուլտացիաներ) պետք է կազմեն առնվազն պրոֆեսորի ծանրաբեռնվածության 20%-ը, դոցենտի՝ 40%-ը, ասիստենտի և դասախոսի՝ 60%-ը։

2.12. Ոչ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները (ժամավճարով կամ քաղաքացիաիրավական պայմանագրով ներգրավված անձիք) վարձատրվում են փաստացի հաշվարկված ծանրաբեռնվածության հիման վրա՝ ժամավճարի սկզբունքով։

2.13. Համալսարանի վարչական և այլ պաշտոններ զբաղեցնող աշխատակիցները մասնագիտական և այլ պահանջները ապահովելու պարագայում կարող են ներգրավվել համապատասխան ամբիոնների հիմնական պրոֆեսորադասախոսական կազմում։ Նրանց տարեկան ծանրաբեռնվածությունը (այդ թվում նախապատրաստական բաժնի դասերը, դասավանդումը վարժարանում և այլն) չի կարող գերազանցել 300 ժամը։ Ամբիոնի վարիչները կարող են ունենալ մինչև 0.5 դրույք ծանրաբեռնվածություն (բացառությամբ դրամաշնորհային, կրկնակի դիպլոմի և այլ հատուկ ծրագրերով նախատեսված ժամեր)։

2.14. Դասախոսների միջև ծանրաբեռնվածության բաշխման մասին առաջարկությունը ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորին ներկայացնում է ամբիոնի վարիչը։ Ամբիոնների ծանրաբեռնվածությունները հաստատվում են Ռեկտորի հրամանով։

2.15. Պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության հաշվարկի կատարվում է սույն կարգի հավելված 1-ում սահմանված նորմերի։

2.16. Պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրության դրույքաչափերը (հիմնական կազմի համար) և ժամավճարի դրույքաչափերը (ներքին համատեղությունների և ժամավճարով հրավիրված ոչ հիմնական կազմի համար) յուրաքանչյուր ուսումնական տարվա համար սահմանվում են համալսարանի Ռեկտորի հրամանով։

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Դասախոսությունները անցկացվում են հոսքերով. տարբեր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների համապատասխան։ Համալսարանի կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալական» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ» կառուցամասերի առարկաներից հոսքերը կարող են միավորվել՝ ընդգրկելով մինչև 70 ուսանող (բացի լեզուների դասավանդման առարկաներից, որոնց հոսքերը չեն կարող գերազանցել 15 ուսանողը)։ «Մասնագիտական դասընթացներ» կառուցամասում ներառված առարկաներից ձևավորվող հոսքերը ընդգրկում են մինչև 50 ուսանող (բացի լաբորատոր պարապմունքներից, որոնց հոսքերը չեն կարող գերազանցել 10 ուսանողը)։ Հոսքերը կարող են ձևավորվել նաև փաստացի սովորողների թվաքանակով։

3.2. Ուսանողների կողմից կատարվող արտալսարանային աշխատանքների (այդ թվում՝ ինքնուրույն և խմբային աշխատանքներ, ռեֆերատներ, նախագծեր կամ այլ հանձնարարություններ) թվաքանակը սահմանվում է համապատասխան դասընթացի առարկայական ծրագրով։

3.3. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, պրատիկաների ղեկավարման ժամերը բաշխվում են ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների միջև՝ առավելություն տալով ամբիոնի հիմնական կազմի ներկայացուցիչներին (բացառություն են կազմում նեղ մասնագիտական փորձառություն կամ գործնական ու փորձարարական մոտեցումներ պահանջող աշխատանքները, արտերկրից հրավիրված կամ միջազգային փոխանակման ծրագերով ներգրավված մասնագետների, գործատուների ներկայացուցիչների ղեկավարմամբ իրականացվող աշխատանքները)։

Հավելված 1. Պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածության հաշվարկի նորմեր.

	Աշխատանքի ձևը	Ժամանակի նորմերը	Ծանոթություն
1	Դասախոսություններ, սեմինար պարապմունքներ Լաբորատոր և գործնական պարապմունքներ	1 ժամ 1 ակադեմիական ժամի համար	Կիրառվում է 1.2 գործակից եթե խումբը բաղկացած է 35 և ավելի ուսանողներից
2	Ընթացիկ կոնսուլտացիաներ քննական առարկաներից	2 ժամ 1 խմբի համար	
3	Թեստերի պատրաստում	0.5 ժամ՝ յուրաքանչյուր թեստի համար	
4	Վերջնական և միջանկյալ քննությունների ընդունում (այդ թվում՝ մարման շրջանում քննությունների ընդունում)	1 ժամ 3 ուսանողին	
5	Վճարովի լուծարքի ընդունում	1 ժամ 1 ուսանողին	
6	Արտալսարանային աշխատանքի հանձնարարում և ստուգում	Ոչ մասնագիտական առարկաների համար 1 ժամ 3 ուսանողին Մասնագիտական առարկաների պարագայում. ա/ պարզ ներկայացումների պատրաստում՝ 1 ժամ 3 ուսանողին, բ/ նախագծային առաջադրանք՝ 1 ժամ 2 ուսանողին, գ/ հետազոտական առաջադ-րանք՝ 1 ժամ 1 ուսանողին։	Արտալսարանային աշխատանքի բնույթը սահմանվում է դասընթացի ծրագրով։
7	Դիպլոմային ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում և գրախոսում	1 ավարտական աշխատանքի ղեկավարին 20[1] ժամ, մագիստ-րոսական թեզի ղեկավարին՝ 25[1] ժամ Ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի	

[1] Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարման և գրախոսման վճարի դրույքաչափերը ըստ մասնագիտությունների սահմանվում են ԵՄՀ ռեկտորի հրամանով։

		գրախոսման համար 2 ժամ[1]	
8	Պետական քննություններ, Ավարտական ամփոփիչ ատեստավորում	Քննական հանձնաժողովի նախագահին 6 ժամ և 0.6 ժամ մեկ ուսանողի համար, հանձնաժողովի անդամին՝ 2 ժամ և 0,5 ժամ մեկ ուսանողի համար	Օրը 8 ժամից ոչ ավելի, հանձնաժողովի անդամների թիվը 7-ից ոչ ավելի:
9	Կոնսուլտացիաներ ընդհանուր առարկայից պետական քննությանը նախապատրաստելու համար	Յուրաքանչյուր դասընթացի համար 2 ժամ	Ոչ ավելի քան 10 ժամ՝ 1 քննության համար
10	Ուսումնական պրակտիկա-յի ղեկավարում (հաշվետ-վությունների ստուգում և գնահատում)	Ըստ փաստացի ծախսած ժամանակի (60 րոպեն հավասար է 1 ակադեմիական ժամ՝ ներառյալ ճանապարհը)	
11	Մասնագիտական պրակտիկայի ղեկավարում	ա/ Ղեկավարում՝ պրակտիկայի վայր գործուղվելով. փաստացի ծախսած ժամանակի կրկնապատիկը (60 րոպեն հավասար է 2 ակադեմիական ժամ) բ/ Ղեկավարում՝ առանց պրակտիկայի վայր այցելելու. 4 շաբաթվա համար 1 ուսանողը 1 ակադեմիական ժամ	
12	Մանկավարժական պրակտիկայի ղեկավարում. ա) խմբի ղեկավարին բ) մանկավարժին գ) հոգեբանին	ա/ 1 ժամ 1 ուսանողին 1 շաբաթվա համար բ/ 0.4 ժամ 1 ուսանողին 1 շաբաթվա համար գ/ 0.5 ժամ 1 ուսանողին 1 շաբաթվա համար	Խումբը 8-10 ուսանող: Անհատական ձևով անցկացնելիս՝ 1 ժամ ամբողջ պրակտիկայի ընթացքում:
13	Պրակտիկաների պաշտպա-նության, ավարտական աշխատանքների և թեզերի նախապաշտպանության, ընդունելության քննություն-ների և այլ հանձնաժողով-ների աշխատանք	1 ժամ 3 ուսանողին՝ յուրաքանչյուր հանձնաժողովի անդամի համար	Հանձնաժողովների կազմը՝ 3-5 անդամ
14	Մասնակցություն ամբիո-նային աշխատանքներին (նիստեր, խորհրդակցութ-	6 ժամ յուրաքանչյուր դասախոսին մեկ ուսումնական տարվա համար	Հաշվարկվում է ուս. տարվա ավարտին

	յուններ և այլն)		
15	Յուրաքանչյուր դասընթացի ծրագրի մշակում/ վերա-մշակում, TEAMS հարթա-կում դասընթացի էջի վարում	8 ժամ յուրաքանչյուր դասընթացի համար	
16	Մասնակցություն ԵՄՀ Մեթոդական խորհրդի աշխատանքներին	15 ժամ ուսումնական տարվա համար	Կիրառվում է դասախոսա-կան կազմի համար
17	Մասնակցություն ԵՄՀ կառավարման մարմինների աշխատանքներին	Կառավարման խորհրդի անդա-մի համար՝ 5 ժամ ուսումնական տարվա համար, Գիտական խոր-հրդի անդամի համար՝ 15 ժամ ուսումնական տարվա համար	Կիրառվում է դասախոսա-կան կազմի համար
18	Ասպիրանտի ղեկավարում	Առկա համակարգ՝ 60 ժամ մեկ ասպիրանտի մեկ ուսումնական տարվա համար, հեռակա համա-կարգ՝ 50 ժամ մեկ ասպիրանտի մեկ ուսումնական տարվա համար	Տվյալ աշխատանքի ձևի պարագայում Ռեկտորի հրամանով սահմանվում է առանձին ժամավճարի չափ
19	Ուսումնական ձեռնարկի (4 մամուլ ծավալով[2]) հրատարակում	80 ժամ մեկ ձեռնարկի համար	Տրվում է ծրագրային (ուս. պլանով նախատեսված) դասընթացի համար մշակված ձեռնարկի համար
20	Դասալսում	Մեկ դասախոսի մեկ դասը (40 րոպե) լսելու համար 0.5 ժամ	Մեկ ամբիոնին ոչ ավել, քան 15 ժամ ուս. տարում։ Դասալսումը իրականաց-նում է ամբիոնի վարիչը, կամ ամբիոնի պրֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչները՝ նախապես պլանավորված և Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված գրաֆիկով[3]

[2] Ավելի փոքր ծավալ ունեցող ձեռնարկների համար վճարումը կատարվում է համապատասխան համամասնությամբ

[3] Իրենց լիազորությունների շրջանակներում՝ դասալսումներ կարող են իրականացնել նաև Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը և Որակի ապահովման կենտրոնի ներկայացուցիչները, վերջիններս չեն վարձատրվում ըստ ներկայացված նորմերի։

21	Կուրսի ակադեմիական խորհրդատու	0.5 ժամ մեկ ուսանողի հաշվով (ուսումնական տարվա կտրվածքով)	Կուրսի ակադեմիական խորհրդատուն նշանակվում է ԵՄՀ ռեկտորի հրամանով՝ ամբիոնի վարիչի ներկայացմամբ։